VII. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիւաղներուն՝ Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Նազիմի, Պէհաէտտին—Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և բոլոր ղեկավարներու զինուորական դատարանով պատժուիլը:

VIII. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիւ օսմանեան կառավարութեան»:

Թեթև ակնարկն իսկ բաւական է հասկանալու համար, թէ ի՞նչ սուր պայքար է տեղի ունեցել բանաձևի շուրջ. նա մեքենայական միացումն է երկու՝ բոլորովին անհաշտելի տեսակէտների — մի կողմից «լիակատար վստահութիւն... Պօղոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին», միւս կողմից՝ «գործնական քայլեր Արարատեան Հանրապետութեան և Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» և այլն: Անկասկած, ռամկավար պատգամաւորները աւելի հետևողական էին իրենց հակաարարատեան տրամադրութիւններով: Պէտք էր կանգնել կա՛մ Հայաստանի, կա՛մ Փարիզի տեսակէտի վրա. ռամկավարներն ընտրեցին վերջինը. համագումարի մեծամասնութիւնը դեռ տատանւում էր Արարատի և Փարիզի միջև:

Այս տեսակէտից, բնորոշ էին նաև համագումարի կողմից «Հայկական պատուիրակութեան նախագահ Նորին Վսեմափայլութեան Պօղոս Նուպար փաշային» և «Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» տրուած ողջոյնի հեռագիրները: Առաջինում ասւում էր, թէ համագումարը «իր սրտագին ողջոյնները կուղղէ Ձերդ Վսեմութեան և իր լիասիրտ վստահութիւնը կը յայտնէ, որ Ձեր կարող և արդիւնաւէտ գործունէութեամբ պէտք է վերջնականապէս ձևակերպուեն հայ բնաշխարհի պետական հիմքերը և հայ բազմաչարչար ժողովրդին հնարաւորութիւն տրուի աշխատել և վերստեղծել իր հայրենի տունը: Համագումարը տեսնելով Ձեր մէջ իւր իղձերու և ցանկութիւններու լաւագոյն արտայայտիչը՝ յոյս ունի, որ իւր քաղաքական և ազգային ձգտումները կը ջանաք լուծել հայ ժողովրդի արհեստականօրէն անջատուած հատուածներու միաւորութեամբ և մէկ պետական–քաղաքական իրաւակարգի ստեղծմամբ»:

«Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» ուղղուած հեռագրում համագումարը «ողջունելով հայութեան մէկ հատուածի կառավարութիւնը՝ լիայոյս է, որ ան ևս կը միացնէ իր ձայնը Արևմտահայ Համագումարի վճռին՝ ունենալ մէկ հայրենիք և մէկ միացեալ ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւն:

Համագումարը գտնելով սոյն խնդիրը հայութեան համար պատմական մէկ կարևոր խնդիր՝ հաւատացած է, որ Արարատեան Հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը և գործնական քայլեր առնել՝ միացումը իրականացնելու համար կեանքի մէջ»:

Այս վերջին միտքը շեշտւում է «Արարատեան Հանրապետութեան Խորհրդարանին» ուղղուած հեռագրում. «Արևմտահայ Բ. Համագումարը՝ ողջունելով Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանը՝ վստահ է, որ ան ևս իր հեղինակաւոր ձայնը պիտի միացնէ հայութեան ամենէն շատ տանջուած և զոհաբերած խոշոր հատուածի ձայնին՝ ունենալ մէկ հայրենիք, Միացեալ Անկախ Հայաստան, մէկ պետական կազմակերպութեամբ: Հա-